

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՂՈՐԴՈՒՄ (2024թ.)

Մշտադիտարկումների օբյեկտը	Մշտադիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը	Արդյունքը
Մակերևութային ջրեր	Նախատեսված չէ				
Ստորերկրյա ջրեր	Նախատեսված չէ				
Մթնոլորտային օդ	բացահանքի տարածք, ճանապարհներ, արտադրական հրապարակ, ընդերքօգտագործման թափոնների օբյեկտի տարածք, ազդակիր համայնքներ,	- հանքափոշի, (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, օքսիդներ, ծծմբային անհիդրիդ,	նմուշառում, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 օրը	Անօրգանական փոշի – 16.35տ (0.518գ/վրկ) Ազոտի երկօքսիդ – 0.325տ (0.014 գ/վրկ) Ածխածնի օքսիդ – 0.618տ (0.027գ/վրկ) Ածխաջրածիններ սահմանային – 0.217տ (0.0 96գ/վրկ) մոխիր – 0.048 տ (0.0021 գ/վրկ)

Հողային ծածկույթ	Նմ N1. 8470533 4467616	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն,	- տարեկան մեկանգամ	ՀՀ	Նմուշի ծածկագիր և վերցման տեղը		
	Նմ N2. 8470683 4467507				Ռոնշվոդ ցուցանիշ	N1	N2	N3
	Նմ N3. 8470631 4467529				1. Ջրածնային ցուցիչ	6.5	7	6.5
	2. Էլեկտրահաղորդականություն (μS/սմ)				18.6	20.3	22.7	
	3. Fe, %				1.86	2.43	3.70	
	4. Mn,				0.06	0.05	0.07	
	5. Zn,				0.01	0.01	0.005	
	6. Cu,				0.02	0.014	0.01	
	7. Mo,				չ/հ	չ/հ	չ/հ	
	8. Cr,				0.001	0.001	0.001	
	9. Co,				0.0001	0.0002	0.0001	
	10. Hg,				չ/հ	չ/հ	չ/հ	
	11. As,				չ/հ	չ/հ	չ/հ	
	12. Pb,				<0.0001	<0.0001	<0.0001	
	13. Ni,				0.001	0.002	0.001	
	14. Sb,				չ/հ	չ/հ	չ/հ	
	15. Cd				0.0001	0.0001	0.0001	
	16. B				0.003	0.002	0.002	
17. Ba	0.06	0.08	0.06					
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ					Տես բացատրագիրը			
Աղմուկ և թրթռում	Բացահանք, Ջրաբեր բնակավայր		Գրանցում ձայնաչափով	տասնօրյակը մեկ անգամ	Տարեկան միջինը հանքավայրի սահմաններում կազմում է 51.0 Դբ, Ջրաբեր բնակավայրի մուտքի մոտ 40 Դբ			

ներ					
Վառելանյութի պահեստարաններ	Նմ N3. 8470631 4467529				Տես աղ.
Ցիանային լուծույթների օգտագործման հետ կապված ենթակառուցվածքներ					
Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակը	Բոլոր սարքավորումներն անցել են տարեկան տեխնիկական զննում				

Տեղեկատվությունը ներկայացրեց «ՎԱՆՈՍ -ՎԱՐ» ՍՊԸ, ՀՀ Կոտայքի մարզ, Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայր (Հյուսիսային տեղամաս), հեռ.095300097

(գտնվելու և գործունեության իրականացման վայրը, հեռախոսահամարը, կայքը, էլեկտրոնային հասցեն և անկախ մասնաճյուղերը)

Ղեկավար ԿՆՕՐԵՆ Գ.ՄԻԻԹԱՐՅԱՆ
(սպաշտոնը, անունը, ազգանունը)



10.02.2025 թ.

(ստորագրողի անունը, ամիսը, ամսաթիվը, տարեթիվը)

ԲԱՅԱՏՐԱԳԻՐ

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՋՐԱԲԵՐԻ ԼԻԹՈՒԴԱՅԻՆ ՊԵՄՉԱՅԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՏԵՂԱՄԱՍՈՒՄ 2024Թ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզում Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայրի վարչական շրջանում բնակավայրից 1կմ հարավ-արևելք:

Հանքավայրը զբաղեցնում է 4.1 հա մակերես և սահմանափակված է հետևյալ ծայրակետային կոորդինատներով (կոորդինատային համակարգը՝ ARM WGS-84)

Հանքավայրի կոորդինատները՝

1.X=8470172.000 Y=4467498.000

2.X=8470352.000 Y=4467595.000

3.X=8470477.000 Y=4467369.000

4.X=8470413.000 Y=4467339.000

5.X=8470221.000 Y=4467409.000

Սույն հաշվետվությունում ամփոփված են 2024թ. ընթացքում հանքավայրում և մերձակայքում իրականացված հողի, մթնոլորտային օդի, բուսական և կենդանական աշխարհի մշտադիտարկումների արդյունքները:

Հանքավայրի իրավիճակային սխեման նմուշառման կետերով ներկայացված է նկ.1-ում:

1. Հողային ծածկույթ

Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի Հյուսիսային տեղամասում և հարակից շրջաններում զարգացած են կրազերծված խորքային կարբոնատային հողեր:

Հողի վերին բերրի շերտը որպես կանոն բնութագրվում է սակավահողոյամբ: Հաստությունը 15-20սմ է, գոգավոր տեղամասերում հաստությունը հասնում է մինչև 60-70սմ:

Բուն հանքավայրի տարածքում արդյունահանման աշխատանքներով պայմանավորված հողի շերտը բացակայում է:

Հանքավայրի մերձակայքի անմշակ հողերը քարքարոտ են (60-70%), բնութագրվում են բարձր էռոզիականությամբ: Վարելահողերում քարքատվածությունը գնահատվում է 15-20%:

Հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, պեմզաների հողմահարման արգասիքների, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:



Նկ.1: Ջրաբերի լիթոիդային պեմզայի հանքավայրի Հյուսիսային տեղամասի իրավիճակային սխեման նմուշառման կետերի տեղադիրքով:

Ըստ մեխանիկական կազմի այս հողերը դասվում են միջակ և ծանր կավավազային տարատեսակների շարքին: Կախված ռելիեֆի պայմաններից և էռոզիայի ենթարկվածության աստիճանից՝ հանդիպում են նաև ավելի թեթև մեխանիկական կազմով հողեր:

Հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ (0.8-1.2%) և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Ծավալային զանգվածը տատանվում է 1.20-1.5գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.45-2.60գ/սմ³-ի: Ընդհանուր ծակոտկենությունը՝ 6.78 – 49.6% է, խոնավությունը՝ 20-30%:

Այս տիպի հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 10-25%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Ամռանը հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Հողային լուծույթի ռեակցիան գլխավորապես չեզոք է, տատանվում է 6.5-7.0-ի սահմաններում:

Հողերի կլանող համալիրը հագեցված է հիմնականում կալցիումով և մագնեզիումով: Բնորոշ է կնձկային ստրուկտուրա:

Հարուստ են ընդհանուր ազոտով (0,9-3,2%) ֆոսֆորական թթվով (0.1-0.42%) և կալիումով (0.5-2.6%), որոնք ժառանգել են սկզբնական հրաբխային ծագման լիթոիդային պեմզաներից:

Հանքավայրի շրջակայքից վերցված հողերի նմուշների քիմիական կազմը բերված է աղ.1-ում:

Աղյուսակ 1

Հանքավայրի շրջակայքի հողի Նմուշների քիմիական կազմը

ՀՀ	Որոշվող ցուցանիշ	Նմուշի ծածկագիր և վերցման տեղը		
		N1	N2	N3
1.	Ջրածնային ցուցիչ	6.5	7	6.5
2.	Էլեկտրահաղորդականություն (μS/սմ)	18.6	20.3	22.7
3.	Fe, %	1.86	2.43	3.70
4.	Mn,	0.06	0.05	0.07
5.	Zn,	0.01	0.01	0.005
6.	Cu,	0.02	0.014	0.01
7.	Mo,	չ/հ	չ/հ	չ/հ
8.	Cr,	0.001	0.001	0.001
9.	Co,	0.0001	0.0002	0.0001
10.	Hg,	չ/հ	չ/հ	չ/հ
11.	As,	չ/հ	չ/հ	չ/հ
12.	Pb,	<0.0001	<0.0001	<0.0001
13.	Ni,	0.001	0.002	0.001
14.	Sb,	չ/հ	չ/հ	չ/հ
15.	Cd	0.0001	0.0001	0.0001
16.	B	0.003	0.002	0.002
17.	Ba	0.06	0.08	0.06

2. Օղային ավազան

Հանքավայրի շահագործման ընթացքում փոշու և գազերի քանակը գնահատվել են հանքավայրի և շարդիչ կայանի միջին մասում: Չափումների ժամանակ օգտագործվել է CEM DT-9880 բազմաֆունկցիոնալ սարքը:

Օղի արտանետումներ միջինացված քանակը ըստ եռամսյակների բերված է աղ. 2-ում:

Օդի արտանետումների քանակը ըստ եռամսյակների

Արտանետումների տեսակը	Եռամսյակներ				տարեկան	
	I	II	III	IV	տ/տարի	գ/վրկ
Անօրգանական փոշի, տ	3.35	6	5	2	16.35	0.518
ածխածնի օքսիդ, տ	0.065	0.11	0.11	0.04	0.325	0.014
ազոտի օքսիդ, տ	0.12	0.22	0.2	0.078	0.618	0.027
սահմանային ածխաջրածիններ, տ	0.12	0.05	0.03	0.017	0.217	0.0096
կախված մասնիկներ (մոխիր), տ	0.009	0.018	0.015	0.006	0.048	0.0021

3.Բուսական և կենդանական աշխարհ

Հանքավայրի շրջանը մտնում է Ապարանի ֆլորիստիկ շրջանի Երևանի ենթաշրջանի մեջ:

Բացահանքի տարածքը պատված է լեռնատափաստանային բուսականությամբ: Հիմնական բնական համակեցությունը Օշինդր բուրավետով (*Artemisia fragrans*) կազմված լեռնատափաստանն է՝ տրագականտային գազերի տարրերով (Գազ մանրագլխիկ - *Astracantha microcephalus*, Գազ նապաստակապոչ - *Astragalus lagurus*): Հացահատիկի դաշտերը կազմված են ցորենի (*Triticum aestivum*) և գարու (*Hordeum vulgare*) արտերից: Ներկայումս արտերի միջև գտնվող հատվածներում առկա են դեգրադացված էկոհամակարգեր՝ ինվազիվ ու էքսպանսիվ (Իշակաթնուկ Սեգիերի - *Euphorbia seguieriana*, Խիժանարճատուկ կնյունանման - *Chondrilla juncea*, Տերեփուկ արևային - *Centaurea solstitialis*, Խոզանափուշ կանաչագլուխ - *Cousinia chlorocephala*) տեսակների մեծ քանակով: Տեղ-տեղ տափաստանային բուսակականությունը ընդհատվում է քարացրոնային ազոնալ և երկրորդական բուսականությամբ:

Ընկերության գրասենյակի հարևանությամբ մշակվում է 7 տարեկան այգի, որտեղ առկա են 20-ից ավելի խնձորենու, դեղձենու, ծիրանենու և բալենու ծառատեսակներ: Աճեցվում են վարունգ, լոլիկ և տաքդեղ:

Հանքավայրի շրջանում աշխատակիցները պարբերաբար նկատել են սովորական աղվես, դաշտամուկ և կանաչ դոդոշ: Սողուններ չեն նկատվել:

Թռչուններից հանդիպել են Փութուլավոր արտույտ, սովորական քարաթռչնակ և Տնային ճնճողուկ, վերջիններս ամենուր են:

Տեղամասի շրջանը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա- և ապրելավայրեր:

Հաշվետվությունն ու բացատրագիրը կազմեց ԱԶ Շ.Խաչատրյանը